ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Հոդված 13. Հիմնարկի աշխատակազմի ղեկավարը~~աշխատակազմի քարտուղարը~~
(վերնագիրը փոփ. 21.01.20 ՀՕ-48-Ն)

1. Հիմնարկի աշխատակազմի ղեկավարը~~աշխատակազմի քարտուղարը~~ օրենքով, իրավական այլ ակտերով, հիմնադրի և համայնքի ղեկավարի որոշումներով, հիմնարկի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հիմնարկի ընթացիկ գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի և համայնքի ղեկավարի որոշումների, հիմնարկի կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

(պարբերությունն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-48-Ն)

2. Հիմնարկի աշխատակազմի ղեկավարը~~աշխատակազմի քարտուղարը~~ չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

3. Հիմնարկի աշխատակազմի ղեկավարը~~աշխատակազմի քարտուղարը~~ օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով՝ պետությանը պատճառված վնասի համար: Հիմնարկի աշխատակազմի ղեկավարի~~աշխատակազմի քարտուղարի~~ լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

Հիմնարկի աշխատակազմի ղեկավարի~~աշխատակազմի քարտուղարի~~ լիազորությունները դադարեցնող անձը պարտավոր է լուծել նաև նրա՝ համայնքին կամ պետությանը պատճառած վնասի հատուցման հարցը: Սույն պահանջը չկատարելու հետևանքով համայնքին կամ պետությանը պատճառված վնասը հատուցում է սույն կետի պահանջը խախտած անձը:

4. Հիմնարկի աշխատակազմի ղեկավարը~~աշխատակազմի քարտուղարը~~ պարտավոր է չկատարել հիմնադրի, համայնքի ղեկավարի՝ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները ու հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

5. Հիմնարկի աշխատակազմի ղեկավարի~~աշխատակազմի քարտուղարի~~ բացակայության դեպքում նրան փոխարինելու հարցը կարգավորվում է

«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով:

(13-րդ հոդվածը փոփ., լրաց., խմբ. 21.01.20 ՀՕ-48-Ն)

Հոդված 14. ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ~~ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ քարտուղարի~~ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(վերնագիրը փոփ. 21.01.20 ՀՕ-48-Ն)

1. ***(մասն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-48-Ն)***
2. ***(մասն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-48-Ն)***
3. Համայնքապետարանի (Երևանի դեպքում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարի~~աշխատակազմի քարտուղարի~~ լիազորությունները սահմանվում են «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով:

(14-րդ հոդվածը լրաց. 08.12.11 ՀՕ-343-Ն, փոփ. 19.10.16 ՀՕ-173-Ն, 21.01.20 ՀՕ-48-Ն)